

մը, ըստ վկայութեան գիւղէն անցնող ամէն միւսլիւ-
մանի: Այդ տղան իբր մարմնական չէնք այնքան տպա-
ւորիչ, իր այդ տուրքին կը յաւելուր տակաւին նոյնքան
յորդ, կատարեալ իմացական շնորհներ, խօսելով թուր-
քերուն լեզուն իր պատանութիւնը անցեր էր թրքութեան
ամէնէն թուրք մայրաքաղաքին, Պրուսայի մէջ՝ ան-
հաւասարելի վայելչութեամբ, նախանձը գրգռելու
աստիճան հազարապետ փաշաներուն, որոնք «մաշալ-
լա՛հ, մաշալլա՛հ» ըսելով տղուն արեւը չար աչքերէ զերծ
պահելու համար կը դիմէին աջին ու ձախին, հալածելով
չարքն ու ժերը եւ կը ցաւէին ծնունդին, իրենց կարծիքով
մինչեւ սատրապամութեան (եպարքոսութիւն) ճամբայ
ունէր այդ երիտասարդը... եթէ երբեք ընդունէր արդար
կրօնքը: Ան դպրոցական կապեր ալ կը շարունակէր
պահպանել գաւառակին փաշային տղոցը հետ,
թուրքերուն համար ըմբռնելի երիտասարդներ (կը զրկեմ
ընթերցողը «Հարիւր մէկ տարուան» շարքէն երրորդին՝
«Սիւլէյման էֆէնտի»ին, որուն տիպարը առած եմ իրմէ),
երկու եղբայր: Փաշան որքան անզգամ (պէյ էր ան դեռ
փաշա չեղած, ինքզինք պարտադրող), տղաքը նոյնքան
զգաստ ու ազնուական: Որսերու պատեհութեամբ կը
հիւրասիրուէին գիւղապետին մանչէն, ինչպէս կը հիւ-
րասիրէին իրենց բարեկամ երիտասարդը իրենց քոյրերը,
մանկատի մայրերը արգիլելով սաւանուելէ ու քրիստոն-
եայ հարսերուն նման սեղանակից ընդունելով զանոնք
իրենց հետ: Հեքիաթ չէ ասիկա, այլ՝ իրաւ ապրում: Հա-
րիւր մէկ տարուան վէպին աշխարհը ձեզի կ'ըսէ շատ
բան այդ ուղղութեամբ:... Անոր գեղէն բացակայու-
թեան, փոխ-յեսնապետները կը դարմանէին (բառը
հասկցէք հին իմաստով) իրենց ձիերը, կ'ուտէին հաւը,
փիլաւը, առաջները՝ միշտ գիւղապետին տունէն. աւելի
յետոյ, բռնապետութեան խստացմամբ, թուրքերուն հան-
դէպ երախտագիտական զգացման մէջ իբր հաւասարու-
թեան ապացուցում՝ շաբաթներով իսկ ցամաք հաց
չտեսնող գիւղացիին կռնակէն (այս ծախքերն են, որ տար-